

Հովհաննես Հովհաննիսյան

Կուզեի լինել կարկաչուն վտակ . . .

Կուզեի լինել կարկաչուն վտակ,
Վճիտ ալիքը դրախտի բուրմունքով,
Եվ առավոտյան ինչպես ցող հստակ,
Երեսդ ոռոգել գոհար շիթերով:

Կուզեի լինել սոսի հովասուն,
Համարձակ փռված կանաչ սաղարթով,
Եվ միջօրեին այդ դեմքիդ սիրուն
Հովանի լինել հեզիկ շրշյունով:

Կուզեի լինել ծաղկոցում բացված
Քացրաբույր մի վարդ, երկնից արժանի,
Եվ սիրո ժամին, խանդիցս արբած,
Զարդարանք լինել կուրծքիդ գեղանի:

Եվ շող դառնալով գարնան արևի՝
Կուզեի պայծառ աչերումդ վառվել,
Կամ ինչպես քնքուշ ոսկեվառ գոտի
Չքնաղ իրանիդ փաթավել, փարվել:

Լուսափայլ աստղիկ կուզեի դառնալ,
Քաղցր մանկան պես ծիծաղն երեսին,
Ինչպես աղամանդ շողշողել, ցոլալ,

Ով իմ թագուհի, քո բաց ճակատին:

Կուզեի լինել լուսին ամոթխած,
Արծաթի փայլով մազերդ շոյել,
Այտերդ գգվել, սիրուց բորբոքված՝
Դողդոջ շրթունքիդ համբույրներ դրոշմել:

Կուզեի լինել սիրահար սոխակ
Եվ ձեռիդ գերի, վանդակում փակված,
Ականջիդ հնչել հրաշալի նվագ,
Մեղմ օրոր ասել քո հոգուն զմայլված:

Եվ կախարդական տաճարում կանգնած
Կուզեի տեսնել ես քեզ Անահիտ,
Եվ երկրպագել, առաջիդ չոքած,
Սուրբ գեղեցկության անմահ տիպարիդ: